սուչը տգէտ և այլն։» Ոչ մի դպրոցի մասին դեռ չենք լսել մի լաւ խօսք։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՄԵՐԻԿԱ

—

Մայրաքաղաքի լրագիրները սաստիկ են հետևեալ հեռագիրները վաշինգտօնից։ Յունիսի 20-ին առաւօտեան 9 ժամին Միացեալ Նահանգների նախագահ Հարֆիլդի վրա հրացան արձակեցին։ Կարծում են, որ նախագահը ծանր վէրք է ստացել։ Լուր է տարածված, որ նա մեռաւ, բայց ընդհանուր խառնակութեան պատճառով դրական տեղեկութիւն անկարելի է ստանալ։ Սպիտակ Տան շուրջը, որտեղ տարել են վիրաւորվածին, մեծ բազմութիւն է հաւաքվել։ Ասում են, որ յանցաւորը կալանաւորված է։ Մանրամասնութիւնները դեռ յայտնի չեն։ Բժիշկները յայտնել են, որ թէև նախագահի վէրքերը վտանգաւոր են, բայց անպայման մահացու չեն։ Նախագահը ուշքի վրա է։ Նա հեռագրով խնդրեց իր կնոջից գալ իր մօտ։ Մարգասպանը հրաժարվում է յայտնել իր անունը։ Ասում են, որ առաջ նա Մարսելի մէջ հիւպատոս է եղած։

Յունիսի 21-ի հեռագիրը հաղորդում է հետևեալը։ Այսօր առաւօտեան 10 ժամին հրատարակված բիւլետինի համեմատ նախագահը ամբողջ գիշերը հանգիստ էր քնած և կազդուրված զարթեցաւ։ Յոյս կայ, որ նա կառողջանայ։ Նախագահի ամուսինը հասաւ արտաքոյ կարգի գնացքով։ Միացեալ Նահանգների ամբողջ մինիստրութիւնը գիշերը հիւանդի մահճակալի մօտ անցկացրեց։ Յանցաւորի անունն է Շարլ Ժիլ Գիտօ։ Նա ծնված է Իլլինոյս նահանգի մէջ, մի ժամանակ Օնէյդի բնակութեան անդամ է եղել և այնուհետև անաջողութեամբ փաստաբանութիւն է արել։ Ամենքը նրան անուանում են սկզբունքներ չունեցող մի բաղդախնդիր, որ մինչև խելագարութեան աստիճան ցանկանում էր անպատճառ երևելի լինել։ Դէմքատ լրագիրները Գիտօին անբարոյական և խելագար են անուանում։ Նա պատկանում է անբաւական դեմոկրատ կուսակցութեանը և անձնական անաջողութիւնների պատճառով կամենում էր անպատճառ վրէժխնդիր լինել նախագահից։

Միացեալ Նահանգների նախագահ Հարֆիլդի վրա հրացան արձակող յանցաւոր Ժիլ Գիտօ թէ կալանաւորվելու ժամանակ և թէ բանտի մէջ մի քանի անկապ նախադասութիւններ արտասանեց, որոնցից երևում է, թէ նա խելագար է։ Երբ յանցաւորին կալանաւորում էին, նա ասաց. „Ես այդ բանն արի և կամենում էի կալանաւորված լինել։ Դեներալ Արտեր այժմ նախագահ է։ Ես այստեղ մի նամակ ունեմ դեներալ Շերմանի վրա, պէտք է նրան յանձնել։ Ես բոլորը կը պատմեմ պօլիցիականներին։“ Իր թղթերը և բէվօլվերը պօլիցիականներին տալու ժամանակ յանցաւորը ասաց. „Ինձ ամուր բռնեցէք և տարէք երբորդ յարկը, առաջին սենեակը։ Դեներալ Շերման շուտով կը գայ իշխանութիւնը ընդունելու համար։ Արտեր և այդ բոլոր մարդիկ իմ բարեկամներ են։ Ես ձեզ պօլիցիայի կառավարիչ կը նշանակեմ։“ Այն տան տիկինը, որի բնակարանում կենում էր Գիտօ, ասաց, թէ յանցաւորի վարմունքը վերջին ժամանակներում շատ օտարոտի էր։ Նա պարծենում էր, թէ ծանօթ է սենատորների հետ և թէ նրան այցելում են երևելի անձինք, թէպէտ այդպիսի այցելուներ նա երբեք չէ ունեցել։ Գիտօի հարագատ եղբայրը յայտնեց, որ յանցաւորին նա միշտ խելագար է համարել։ Ժիլ Գիտօի գրաւոր յուշմունքի մէջ ասված է. „Ես ամենևին նպատակ ոչինչ թշնամութիւն չունեմ պէսպի Հարֆիլդի։ Նրա մահը քաղաքական անհրաժեշտութիւն է։ Ես աստուածաբան, փաստաբան և քաղաքագէտ եմ։“

Հարֆիլդ ուշքի գալով, կամեցաւ իմանալ բժիշկներից իր իսկական դրութիւնը։ Բժիշկը ասաց, որ Հարֆիլդի մահը գրեթէ անփախչելի է։ Հարֆիլդ նկատեց. „Թող այդպէս լինի, եթէ իմ մահը մօտ է, ես պատրաստ եմ։“ Այնուհետև նա մխիթարում էր իր հիւանդ կնոջը և երեխաներին։ Եւրոպական բոլոր թագաւորներից և կառավարութիւններից համակրական հեռագիրներ են ստացված։ Վիկտորիա թագուհին երեք հեռագիր ուղարկեց, որոնց բովանդակութիւնը չափազանց բարեկամական է։ Ամերիկական դեսպանատները եւրոպական քաղաքների մէջ կատարելապէս լիքն են այցելուներով, որոնք յաւակնութիւն են յայտնում պատահած դժբաղդութեան առիթով։ Առհասարակ բոլոր նշանաւոր լրագիրները համակրութեամբ են խօսում Հարֆիլդի մասին։

ԱՒՍՏՐՕ-ՈՒՆԳԱՐԻԱ

—

Օրվայ նշանաւոր խնդիրը Պրագայի մէջ կատարված անկարգութիւններն են, որոնք առանց հետևանքի չը մնացին։ Անկարգութիւնները այն աստիճան մեծ էին, որ զօրանական դեսպան կոմս Րէչ ստիպված եր միջամտել գործին։ Գերմանական երկու հիւպատոսներ, որոնք բռնութիւնների ենթարկվեցան, մի հեռագիր ուղարկեցին գերմանական դեսպանին, որով խնդրեցին բաւականութիւն և նրա պաշտպանութիւնը։ Պրագայի համալսարանը փակված է և մինչև ձմեռ չի բացվի։ Ակադեմիական խորհուրդը մտադիր է մի գեկուցումն ուղարկել կայսրին և բացատրել Պրագայի մէջ պատահած անցքերը, բայց շատերը չեն հաւատում այդ դիտաւորութեանը։ Վիէննայի հանգիստների խորհուրդը մի վճիռ կայացրեց, որով նա յայտնում է իր անբաւականութիւնը Պրագայի մէջ կատարված անկարգութիւնների մասին և յոյս ունի, որ կառավարութիւնը բոլոր միջոցները գործ կը դնի իր հաւատարիմ հպատակներին պաշտպանելու համար։ Յունիսի 30-ին երեկոյեան անկարգութիւնները կրկնվեցան։ Դերմանական ընթերցարանի, կլուբի և թատրոնի առաջ հազարաւոր չեխեր սպառնում էին մտնել, հրկիզել հիմնարկութիւնները, ազմուկ էին հանում, սուլում էին, պատուհաններ էին ջարդում և հեռացան միայն այն ժամանակ, երբ պօլիցիական ուժեղ զօրաբաժիններ նրանց դէմ սաւը գնդք գործ դրին։ Այնու ամենայնիւ ամբողջ նշանաւոր բռնութիւններ գործից։ Նա քարեր էր ընդում պօլիցիականների վրա, որոնցից մի քանի մարդ վիրաւորված են։ Շատ մարդիկ կալանաւորված են։ Նրանց թիւը մի հազարից է և մի պաշտօնական անձն։ Յուլիսի 3-ին Պրագայի մէջ Բօհեմիայի գերմանական պատգամաւորները մի ժողով կը կայացնեն, որին հետևել երկու առաջարկութիւնները կան։ Առաջին առաջարկութիւնը պահանջում է մի պատգամաւորութիւն ուղարկել աւստրիական կայսրին և նրա պաշտպանութիւնը խնդրել Բօհեմիայի գերմանացիների համար, իսկ երկրորդ առաջարկութեան համեմատ բոլոր պատգամաւորները պէտք է հրաժարին իրանց ընտրողներին, որպէս զի նրանք իրանց կողմից մի պատգամաւորութիւն ուղարկեն կայսրին և խընդրեն Պրագայի մէջ ուսում առնող իրանց որդիների և ցեղակիցների ապահովութիւնը։

ՖՐԱՆՍԻԱ

—

Ֆրանսիական պատգամաւորների ժողովի մէջ յունիսի 30-ին եղած վիճաբանութիւններից յետոյ ամենքը համոզվեցան, որ Ալբեր Գրեվի այլ ևս չէ կարող ճնշել Ալժիրիայի գլխաւորհանգամանք։ Տունիսից անհանգստացնող լուրեր են ստացվում։ Ֆրանսիական հիւպատոսը Սֆակսի մէջ վիրաւորված է։ Ֆրանսիական պատերազմական փոքր նաւերից մէկի օֆիցերները ափ իջան հիւպատոսին պաշտպանելու համար, բայց ստիպված էին լոդալով փախչել մինչև իրանց նաւը։ Կարգադրված է անյապաղ զօրքեր ուղարկել Սֆակս, որովհետև ընդհանուր կարծիք է, որ Սֆակսի գաւառի ստիճան ցանկանում էր անպատճառ երևելի լինել։ Դէմքատ լրագիրները Գիտօին անբարոյական և խելագար են անուանում։ Նա պատկանում է անբաւական դեմոկրատ կուսակցութեանը և անձնական անաջողութիւնների պատճառով կամենում էր անպատճառ վրէժխնդիր լինել նախագահից։

Միացեալ Նահանգների նախագահ Հարֆիլդի վրա հրացան արձակող յանցաւոր Ժիլ Գիտօ թէ կալանաւորվելու ժամանակ և թէ բանտի մէջ մի քանի անկապ նախադասութիւններ արտասանեց, որոնցից երևում է, թէ նա խելագար է։ Երբ յանցաւորին կալանաւորում էին, նա ասաց. „Ես այդ բանն արի և կամենում էի կալանաւորված լինել։ Դեներալ Արտեր այժմ նախագահ է։ Ես այստեղ մի նամակ ունեմ դեներալ Շերմանի վրա, պէտք է նրան յանձնել։ Ես բոլորը կը պատմեմ պօլիցիականներին։“ Իր թղթերը և բէվօլվերը պօլիցիականներին տալու ժամանակ յանցաւորը ասաց. „Ինձ ամուր բռնեցէք և տարէք երբորդ յարկը, առաջին սենեակը։ Դեներալ Շերման շուտով կը գայ իշխանութիւնը ընդունելու համար։ Արտեր և այդ բոլոր մարդիկ իմ բարեկամներ են։ Ես ձեզ պօլիցիայի կառավարիչ կը նշանակեմ։“ Այն տան տիկինը, որի բնակարանում կենում էր Գիտօ, ասաց, թէ յանցաւորի վարմունքը վերջին ժամանակներում շատ օտարոտի էր։ Նա պարծենում էր, թէ ծանօթ է սենատորների հետ և թէ նրան այցելում են երևելի անձինք, թէպէտ այդպիսի այցելուներ նա երբեք չէ ունեցել։ Գիտօի հարագատ եղբայրը յայտնեց, որ յանցաւորին նա միշտ խելագար է համարել։ Ժիլ Գիտօի գրաւոր յուշմունքի մէջ ասված է. „Ես ամենևին նպատակ ոչինչ թշնամութիւն չունեմ պէսպի Հարֆիլդի։ Նրա մահը քաղաքական անհրաժեշտութիւն է։ Ես աստուածաբան, փաստաբան և քաղաքագէտ եմ։“

Հարֆիլդ ուշքի գալով, կամեցաւ իմանալ բժիշկներից իր իսկական դրութիւնը։

բական նահանգում, այս լուսաւորեալ ասէն և իննսերորդ դարում կատարված հարատահարութեանց ցուցակը, որ ժողված եմ վանայ առաջնորդարանի արձանագրութիւններից։

Ցիշեալ թուականում թէ կառավարութեանը և թէ քրդերի ձեռքով յափշտակված է հայ գիւղացիներից 72,971 ոչխար։

Յափշտակված է 8,676 եզ։ Եզների մի մասի յափշտակութեան եղանակը չատ հետաքրքրական է։ Անցեալ ռուս-թիւրքական պատերազմին գիւղացիները, սէրութեան պահանջով, ստիպված էին բանի պաշարեղէններ զոհաբերել Օսմանեան բանակին, և իրանց սեփական եզներով բանակումը տեղափոխել։ Յետադարձին գիւղացիք կողոպտվում էին, եզները յափշտակվում և բանակի մէջ մորթվում էին, զօրքերին կերակրելու համար։ Խեղճ երկրագործները, զրկվելով նաև բուռն ջվալներից, պատարկ լալով յետ էին դառնում։ Յափշտակված է 4889 կով, 658 ջորի, 732 ձի, 738 գոմէշ, 564 էշ։

Յափշտակված է 46 հրացան։ Ուրեմն 1877-ին վաստրական նահանգում 241,324 բնակիչ հայերի մօտ, միայն 46 հրացան է գտնվել։

Բռնութեամբ առնված է 35,329 չափ ցորեն, ամեն մի չափը չորս պուդ հաշվով, կանէ 141,316 պուդ։

Կողոպտված են 19 վանքեր և եկեղեցիներ։

Սպանված են 152 մարդ։

Բռնի կրօնափոխ եղած են 44 անձինք։

Առևանգած են 38 կանայք։

Կատարված են 105 հրդեհներ։

Իսկ կողոպտված առն կահկարասիներ, երկրագործական, ջրաղացի, արհեստի վերաբերեալ գործիքներ, զգեստներ, ուտելեղէններ, ինչպէս հաց, ձուլ, եղ. զանիր, ձուաբար, հաւ, կաշառք և այլն, որոնք մանրամասնաբար գրված են արձանագրութիւնների մէջ, բոլորը դրամի վերածելով, վնաս հասնում է 12,362,127 զուրուշ, մօտաւորապէս 1,000,000 ր.

Պատերազմի տարին գիւղացիք բարբարոսութիւններից ազատվելու համար, իրանց ընտանեկան իրեղէնները թագնցին տեղում և փախան սարերը։ Այդ իրեղէնների մեծ մասը քրդերը տանեցին տարան, մնացած մասը փտաւ տեղի մէջ։ Այս վնասներն ևս մացրած է վերոյիշեալ գումարի մէջ։

Հաշվենք այժմ այդ վնասների գումարը։

72,971 ոչխար, ամեն մէկը	4 ր.	
հաշվելով կանէ		291,884 ր.
8,676 եզ, ամեն մէկ..	40 ր.	
հաշվելով կանէ		355,716 ր.
4,889 կով, ...	30..	151,559 ր.
105,987 պուդ ցորեն, պուդը	2 ր.	211,974 ր.
738 գոմէշ.....	80 ր.	59,772 ր.
658 ջորի	60 ր.	40,138 ր.
732 ձի	60 ր.	44,652 ր.
564 էշ.....	10 ր.	6,204 ր.
Ասեացնում եմ վերոյիշեալ գումարը		1,000,000 ր..
ընդամենը		2,161,899 ր..

Այս հաշվից դուրս է մնում թղթադրամի, պղնձի դրամի վնասը, որոնք բոլորովին իրանց արժէքը կորցնելով, չրջակայութիւնից դուրս ընկան։ Մեռելիք դրամներ, որոնք իրանց արժողութեան կէսը կորցրին։ Կոնսոլիանների վնասը։ Այս ամեն դրամական վնասները անգլիական մի լրագիր 50 միլիոնի է հասցնում։ Կողոպտված 19 վանքերի վնասը, 105 հրդեհների վնասը, վանայ հրդեհի վնասը 200,000 օսմանեան ոսկու, մօտ 1,000,000 ր. կարողութիւն այրվեց։ Ընդամենն վնասը կարելի է մօտաւորապէս 7,000,000 ր. հաշվել, որ վաստրական նահանգի համար սարսափելի մեծ գումար է։

Յաւելացնենք և այդ ամենի վրա անցեալ տարվայ սոսկալի սովը, երևակայեցէք ուրեմն, միջատասիւ. ունկնդիրներ, թէ այդ աչխարհի տընտեսական վիճակը ինչ աստիճանի մէջ կարող է լինել։

Չարմանալի չէ արևմն, որ այդ բիւր անգամ սովերի, համաճարակ ժանտախտների, հրդեհների, պատերազմների, սպանութեանց, յափշտակութեանց, առևանգութեանց, բռնի կրօնափոխութեանց և ամեն տեսակ հարատահարութեանց ենթարկված ժողովուրդը դեռ իրան հարատահարող բարբարոսներից կրկնապատիկ բարձր է թուվ, բարձր է բարոյականութեամբ, բարձր է մտաւոր և նիւթական կարողութեամբ։

Տեսնուն, անյոգնատանջ աչխատութիւնը միշտ հրաշքներ է գործում։

Մինչ թիւրքերը վերջին պատերազմի ժամանակ աննկարագրելի բռնութեանց ենթարկեցին հայերին, գատարկելով նրանց պաշարեղէնների ամբարները, զրկելով նրանց երկրագործական գործիքներից և կենդանիներից, կողոպտելով նրանց վերջին կարողութիւնը, այրելով գիւղերում դէղերը, մարագները, քաղաքներում վաճառանոցները, անները, կարծում էին, որ այդ արևելեան ինդրի հանգոյցը, պատճառը էրմէնի կեավուրները աչընչացան և չուտով կենդանութեան վերջին չունչը կը փչեն, Ցանկարծ փլատակների, հրկիզեալ մոխրի միջից փիւնիկի պէս վերանորոգվեց հայն, թօթափելով իր դարաւոր ստրացնող թմրութիւնը, վեր կացաւ և պաշտպանվելու, զինքի պէտք զգաց։ Նրա պանդուխտ ազգակիցները տեսնելով նրանց անհատատար կրծի ճգնաժամը, ամեն կողմից օգնութեան հասան, ցիմարվեց, ապչեց թշնամին տեսնելով այն ոսկեայ հոսանքը, որ ամեն կողմից Հայաստանի մէջ կը թափվէր։ Սիրտ առաւ մինչև այն ժամանակ իրան անտէր համարած ժողովուրդը ներսից պաշտպանվել յափշտակողների դէմ։ Ալբված վաճառանոցները, գիւղերը չինվեցին ամեն գեղեցիկ, յափշտակած ոչխարների, գոմէշների, եզների և տնային կահկարասիների տաղը հետզհետէ լեցվեց։ գիւղացին զարձեալ սկսեց լծել իր աչխարհ վարցնող գութանը և լեցնել դատարկած ամբարները, արհեստաւորները ձեռ տուին իրանց ընդհատած գործին, վաճառականները սկսեցին իրանց առևտրական չրջանառութիւնը, ու թշնամին, որ առաջ ուրախ արտմարհում էր, սկսեց պատկառիլ և սարսափել։

Թիւրքերը մինչև այժմ էլ չեն կարողացել ճանաչել, թէ հայ ազգը փոքր-Ասիայում ինչ նշանակութիւն ունի, դա է պատճառը, որ նրանք հայոց գիւնւորական ընդունակութիւնից չեն կարողացել օգուտ քաղել, բայց և այնպէս, ազգը միշտ տուել է թիւրքիային նշանաւոր քաղաքագէտներ, անտեսագէտներ, ազգինիտարաւորներ, որոնցից մէկը կայսրութիւնը մի սարդ կործանումից ազատեց։ Շատ երկար ժամանակ թիւրքիայի ֆինանսական կառավարութիւնը հայոց ձեռքն էր և այդ սարիները վատ տարիներ չեն եղել նրա գանձարանի համար։ Այժմ էլ փոքր-Ասիայի ղրանձարանի գանձապետները (սանջղէմնի) բոլորը հայեր են։ Օրէնքը թոյլ չէ տալիս այդ պաշտօնը թիւրքերին, նախ՝ նրա համար, որ տախտ չը գիտեն, երկրորդ՝ անհատատրիմ են։ Բայց այս ամենի փոխարէն, կառավարութեան վատթարութիւնը միշտ աչխատել է ջնջել այն սարերը, որը իր գոյութեան հիմքն է, որ այդ աչխարհի ինքնական և բարոյական տէրն է, որ իր վաճառականութեամբ, արհեստագիտութեամբ, երկրագործ-